Ընդունելության մասին ընդհանուր տեղեկություններ

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 05 ապրիլի 2012թ. թիվ 254-Ն հրամանով սահմանված ՀՀ Նախնական մասնագիտական (Արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի համաձայն

Ընդունելության մրցույթն անց է կացվում ըստ մասնագիտությունների՝ տվյալ Հաստատությունում կրթության կառավարման տեղեկատվական համակարգում գրանցված դիմորդների հայտերի հիման վրա:

Քոլեջում ընդունելության քննությունները անցկացվում են օգոստոսի 5-ից 15–ը ընկած ժամանակահատվածում: Դիմումատուի անհատական էջում ձևավորվում է քննական թերթիկը, որում նշվում է քննության օրվա, ժամի և քննության անցկացման վայի մասին տեղեկատվությունը, որի թղթային տարբերակով և անձը հաստատող փաստաթղթի հետ միասին դիմորդը ներկայանում է քննության:

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են էլեկտրոնային եղանակով dimord.emis.am կայքում, թափուր տեղերի առկայության դեպքում այլ մասնագիտական հաստատություններից դուրս մնացած դիմորդների համար մինչև՝ օգոստոսի 22-ը ներառյալ ժամը 18:00–ն:

Դիմորդը կարող է դիմել մեկ ուսումնական հաստատություն մեկ մասնագիտության՝ որակավորման:

Դիմորդների կողմից դիմում հայտերը կրթության կառավարման տեղեկատվական համակարգում կարող են փոփոխվել մինչև գործերի ընդունման օրվա ավարտը:

Անվճար և վճարովի ուսուցման տեղերում մրցույթն իրականացվում է վկայականի գնահատականների հաշվարկման հիման վրա՝ ընդունելության կարգին համապատասխան :

Անվճար և վճարովի ուսուցման տեղերում մրցույթն իրականացվում է փաստաթղթերի ընդունման, իսկ ոլորտային մասնագիտությունների գծով՝ քննությունների ավարտման հաջորդ աշխատանքային օրը:

Ընդունելության մրցույթի արդյունքները հրապարակվում են Հաստատության տվյալ մասնագիտության մրցույթի արդյունքների ամփոփումից անմիջապես հետո:

Դիմորդի դիմում հայտը հիմնավորմամբ մերժվում է ընդունող հանձնաժողովի կողմից, եթե.

1. դիմորդը դիմում հայտը և/կամ փաստաթղթերը ներկայացրել է թերի և թերությունները դիմորդի կողմից չեն վերացվել այն ներկայացնելուց 3 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան դիմում հայտերի ընդունման վերջնաժամկետից 1 օր առաջ,
2. ավարտական փաստաթղթում առկա չէ իր նախընտրած մասնագիտության հավելված 1-ով սահմանված մրցույթային առարկայի գնահատական:
3. առկա (ստացիոնար) ուսուցմամբ հիմնական կրթության հիմքի և մասնագիտության (բացառությամբ արվեստի ոլորտի) 10 դիմում հայտից քիչ լինելու դեպքում՝ դիմում հայտերի ընդունման վերջնաժամկետից 1 օր առաջ, որի մասին նույն օրը տեղեկացվում է դիմումատուին հեռախոսակապի և դիմումատուի էլեկտրոնային հասցեի միջոցով:
4. միջնակարգ կրթություն ստացած դիմորդը դիմել է ընդունվելու հիմնական կրթությամբ հատկացված տեղում կամ հակառակը՝ հիմնական կրթությամբ դիմորդը՝ միջնակարգ կրթությամբ:

Դիմորդն ընդունելության քննության է ներկայանում անձնագրով (մինչև 16 տարեկան դիմորդը՝ ծննդյան վկայականով, եթե անձնագիր չունի) և քննական թերթիկով , որոնք ստուգվում են ընդունող հանձնաժողովի կողմից՝ Հաստատություն և քննասենյակ մտնելիս: Քննությունների ժամանակացույցով նախատեսված օրն անհարգելի պատճառով քննությանը չներկայացած դիմորդին չի թույլատրվում մասնակցել հետագա քննություններին: Հարգելի պատճառով քննությանը

չներկայացած դիմորդին, ընդունող հանձնաժողովի որոշմամբ, հնարավորություն է տրվում այն հանձներ, եթե տվյալ առարկայի քննությունները Հաստատությունում չեն ավարտվել:

Ընդունելության քննությունները Ոլորտային մասնագիտություններով գնահատվում են 20 բալային համակարգով: Դրական են համարվում 8 և ավելի միավորները: 8 միավորից ցածր ստացած դիմորդը չի մասնակցում մրցույթին:

Հաստատության ընդունող հանձնաժողովի կողմից հաստատված քննությունների արդյունքների ցուցակները փակցվում են ի տես բոլորի ոչ ուշ, քան տվյալ քննության հաջորդ օրվա ժամը 12-ը:

Գրավոր քննության գնահատականը դիմորդը կարող է գրավոր բողոքարկել ընդունող հանձնաժողովի նախագահին՝ քննությունների արդյունքները հրապարակվելուց հետո՝ մինչև հաջորդ օրվա ժամը 12-ը:

Քոլեջ ընդունված ուսանողի հետ կնքվում է համապատասխան պայմանագիր: